ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հունվարի 2025թ. թիվ 33-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ԸՍՏ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱՇԽԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 14-Ի ԹԻՎ 35-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Մարզպետի, մարզպետի տեղակալների, մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի, մարզպետի խորհրդականի և օգնականների միջև պարտականությունները, ըստ բնագավառների համակարգման, բաշխել հետևյալ կերպ՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2. Հաստատել մարզպետի տեղակալների կողմից իրականացվող ընդհանուր բնույթի գործառույթները՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզպետի 2022 թվականի հունվարի 14-ի «Լոռու մարզպետարանում ըստ բնագավառների համակարգման պարտականությունները բաշխելու և ՀՀ Լոռու մարզպետի 2021 թվականի հունվարի 8-ի թիվ 1-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 35-Ա որոշումը:

4. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում եմ անձամբ:

X

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

2025թ. հունվարի 20
ք.Վանաձոր

Հավելված 1.
ՀՀ Լոռու մարզպետի
2025թ. հունվարի 20-ի
թիվ 33-Ա որոշման

Մարզպետի, մարզպետի տեղակալների, մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի, մարզպետի խորհրդականի և օգնականի միջև, ըստ բնագավառների համակարգման, պարտականությունների բաշխում

1. Մարզպետ Ա.Ղազարյան.
1) Կրթություն, մշակույթ և սպորտ,
2) Առողջապահություն և սոցիալական ոլորտի հարցեր,
3) Հողաշինություն և հողօգտագործում,
4) Տեղեկատվություն և հասարակայնության հետ կապեր:

2. Մարզպետի տեղակալ Գ.Ասրյան.
1) Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցեր,
2) Կրթություն, մշակույթ և սպորտ,
3) Գյուղատնտեսություն և շրջակա միջավայրի պահպանություն,
4) Զորահավաքային նախապատրաստություն:

3. Մարզպետի տեղակալ Հ.Ավետիսյան.
1) Քաղաքաշինություն, տրանսպորտ, ճանապարհաշինություն և ենթակառուցվածքներ,
2) Զարգացման ծրագրերի մշակում և իրականացում,
3) Քաղաքացիներին սոցիալական աջակցության տրամադրման աշխատանքների կազմակերպում և համակարգում:

4. Մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Կ.Աշրաֆյան.
1) Ֆինանսական հարցեր,
2) Անձնակազմի կառավարում,
3) Իրավաբանական բաժին,
4) Փաստաթղթաշրջանառություն:

5. Մարզպետի խորհրդական Ն.Թովմասյան.
1) Քաղաքաշինության, հողաշինության և հողօգտագործման ոլորտներում իրականացվող աշխատանքների վերահսկողություն,
2) Սուբվենցիոն ծրագրերով և պետական աջակցությամբ իրականացվող կապիտալ շինարարության և կապիտալ վերանորոգման աշխատանքների կատարման ընթացքի մշտադիտարկում,
3) Մարզպետի այլ հանձնարարականների կատարում:

6. Մարզպետի օգնական Հ.Հակոբյան.

1) Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և Լոռու մարզում բնակվող անձանց հետ առնչվող աշխատանքների իրականացում,

2) Մարզի տարածքում քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ոլորտներին առնչվող աշխատանքների իրականացում, դրանց վերաբերյալ մարզպետի ընդունած որոշումների կատարման ընթացքի վերահսկողություն,

3) Մասնակցություն քաղաքացիական պաշտպանության պլանի մշակման և հետագա ճշգրտման աշխատանքներին,

4) Զորահավաքային նախապատրաստության շրջանակներում կազմակերպվող ուսումնավարժական հավաքներին և պարապմունքներին մարզպետի աշխատակազմի աշխատակակիցների մասնակցության ապահովում,

5) Մարզպետին կից հասարակական հիմունքներով գործող խորհուրդների աշխատանքների համակարգում,

6) Քաղաքացիների ընդունելության կազմակերպում,

7) Մարզպետի օրակարգի կազմման աշխատանքների ապահովում,

8) Պատվիրակությունների այցերի և ընդունելությունների աշխատանքների կազմակերպում և համակարգում,

9) Մարզպետի այլ հանձնարարականների կատարում:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

21/01/2025

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ

Հավելված 2.
ՀՀ Լոռու մարզպետի
2025թ. հունվարի 20-ի
թիվ 33-Ա որոշման

Մարզպետի տեղակալների կողմից իրականացվող
ընդհանուր բնույթի գործառույթներ

1. Համակարգում են մարզպետի աշխատակազմի աշխատանքները մարզպետի կողմից իրականացվող քաղաքականության՝ իրենց հանձնարարված բնագավառներում:
2. Իրենց լիազորությունների սահմաններում համակարգում են մարզպետին վերապահված բնագավառների քաղաքականության ապահովումը մարզպետի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների միջոցով, տալիս են ցուցումներ և հանձնարարականներ:
3. Վերահսկում են տրված հանձնարարականների կատարումը:
4. Կազմակերպում են նախնական քննարկումներ մարզպետի մոտ քննարկվելիք հարցերի վերաբերյալ:
5. Իրականացնում են աշխատանքներ մարզպետի հանձնարարականների մասնագիտական ուսումնասիրությունների ու վերլուծությունների ուղղությամբ, ներկայացնում են համապատասխան տեղեկանքներ:
6. Պարբերաբար մարզպետին են ներկայացնում տեղեկատվություն՝ իրենց ամրագրված բնագավառներում տիրող վիճակի մասին:
7. Իրենց ամրագրված բնագավառներում իրականացնում են մարզպետի որոշումների կատարման վերահսկողություն:
8. Մարզպետի հանձնարարությամբ իրականացնում են այլ գործառույթներ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

20/01/2025

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ